Քարոզ նորին Սիմէօնի ի Համբարձումն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յերկինս ի բանն թէ՝ *Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա Համբարձաւ յերկինս**

Ասի ի վարդապետաց թէ՝ ամենայն խորհուրդ եւ յիշատակք տնօրէնութեանն Քրիստոսի, եւ ամենայն տօնք սրբոցն որք յիշեն յեկեղեցիս են վիրաւորիչք եւ տանջիչք սատանայի. սակայն տօն Համբարձմանն Քրիստոսի քան զամենայն արար զնա գլխակոր եւ ամօթալից. եւ ըստ ամենայնի պնդեաց զնա ի տանջանս յուսահատութեան:

Քանզի բոլոր խորհուրդ տնօրէնութեանն Քրիստոսի, որքան յիշատակին, այնքան վերանորոգին զկսկիծն նորա, որովք յաղթահարեցեալ գլխակոր եղեւ: Նոյնպէս եւ յիշատակք սրբոցն, որք տօնին, այնքան վերանորոգեն զտանջանս նորա, որք կոխելով զգլուխն նորին, թռեան յերկինս, սակայն, ի յամենայն խորհուրդ տնօրէնութեանն Քրիստոսի, չարահնարն սատանայ՝ էգիտ զհնար իմն չարութեան ի վրդովել զմիտս հասարակին, ի հեշտութիւն ինքեան, թէպէտ յետոյ գտանիւր ամօթով: Զոր օրինակ, ի յղութեանն կարծիս էարկ ի Յովսէփ գոլ ի պոռնկութենէ ըստ աւետարանին, ի ծննդեանն ի Յովսէփայ ետ կարծել եւ ոչ կուսածին, որպէս ասէին հրէայքն, ոչ դա է որդի հիւսանն, եւ յետ ծննդեանն վրդովեաց զմիտս Հերովդէսի, եւ ետ կոտորել զմանկունս յորս եւ նա սպանցի: Ի մկրտութեանն ետ կարծել կարօտ գոլ մաքրութեան: Ի քարոզութեանն սամարացի եւ մոլեգնեալ ասէ ետ ըստ աւետարանին, թէ՝ համարեցան իւրքն, թէ մոլեգնեալ իցէ, ելին ունել զնա: Ի բժշկութեանն իշխանաւն դիւաց ասել ետ, ի չարչարանսն մոլորեցուցիչ եւ հայհոյիչ ասել ետ: Ի խաչիլն ընդ աւազակին դասեաց, ի թաղելն զվէմն կնքել ետ, ի յարութեանն գողացեալ հռչակեալ ետ: Սոյնպէս եւ ի յառաքեալսն եւ ի սուրբսն հնարէր զպէսպէս նիւթս չարութեան: Բայց ի հրաշալի տօնս այս որ է համբարձումն Քրիստոսի, ոչինչ կարաց հնարե ամենաչարն այն՝ թէպէտ շատ ջանաց, այլ ամենեւին ամօթալից եղեալ վա՛յ կարդաց գլխոյն, եւ մատնեցաւ ի նորագոյն տանջանս յուսահատութեան: Քանզի ինքն իսկ կուրացեալ աչօք տեսանէր զՔրիս-

* ՄՄ, ձեռ. 2314, էջ 2բ - 3ա. հմմտ. ձեռ. 2212, էջ 241ա - 243ա:

ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՎԱՆՑԻ
ՔԱՐՈԶ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

«Եվ ինքը Տեր Հիսուս, նրանց հետ խոսելուց հետո,
դեպի երկինք վերացավ և նստեց Հոր աջ կողմը»
(Մարկ. ԺԶ. 19):

Վարդապետներն ասում են, որ [թեպետ] Քրիստոսի տնօրինության բոլոր խորհուրդներն ու հիշատակները և սրբերի բոլոր տոները, որոնք հիշվում են եկեղեցու կողմից, սատանային խոցող ու տանջող են, սակայն Քրիստոսի Համբարձման տոնն [ավելի], քան մյուսները, նրան դարձրեց գլխահակ ու ամոթահար, և [նրան] ամբողջովին դրեց հուսահատ տանջանքների մեջ:

Որովհետև Քրիստոսի տնօրինման բոլոր խորհուրդները որքան [որ] հիշատակվում են, նույնքան [և] նորոգում են նրա կսկիծը, որոնցից [և] պարտվելով՝ [նա] գլխահակ եղավ: Նույնպես և սրբերի հիշատակները, որոնք ինչքան որ տոնվում, այնքան [և] նորոգում են նրա տանջանքները, [այն սրբերի], որոնք ոտնակոխ անելով նրա գլուխը՝ ճախրեցին դեպի երկինք: Սակայն Քրիստոսի ամեն մի խորհրդի մեջ չարիք հնարող սատանան [ամեն անգամ] չար հնար գտավ՝ վրդովելու հասարակության միտքը դեպի իր փափկությունը, թեպետ [վերջինս] դրանից հետո ամոթի մեջ էր ընկնում: Այսպես, օրինակ, հղության ժամանակ կարծել տվեց Հովսեփին, թե պոռնկությունից է՝ ըստ Ավետարանի: Ծննդյան ժամանակ կարծել տվեց, թե Հովսեփից է և ոչ թե կուսածին [է]. ինչպես որ հրեաներն էին ասում. «Դա հյուսնի որդի չէ»: Ծնունդից հետո խռովեց Հերովդեսի միտքը և կոտորել տվեց մանկանց, [որպեսզի] նրանց հետ և Նա սպանվի: Մկրտության ժամանակ կարծել տվեց, թե սրբության պակաս կա: Քարոզչության ժամանակ ասել տվեց, [թե]՝ սամարացի է և խելքը թոցրած. ըստ Ավետարանի, թե՝ «...յուրայինները ելան եկան նրան բռնելու, որովհետև կարծում էին, թե խելքը կորցրել է» (Մարկ. Գ. 21): Բժշկության ժամանակ՝ ասել տվեց, [թե] դևերի իշխանության տակ է: Զարչարանքների ժամանակ՝ ասել տվեց, թե մոլորեցնող և հայհոյող [է]: Խաչվելիս՝ ավազակի հետ դասեց: Թաղվելու ժամանակ՝ վեմը կնքել տվեց, հարության ժամանակ գողացված հայտարարել տվեց: Նույնպես և առաքյալների ու սրբերի վերաբերյալ զանազան անիրավություններ էր հնարում: Բայց այս հրաշալի տոնի՝ Քրիստոսի համբարձման վերաբերյալ ոչինչ չկարողացավ հնարել այն ամենաչար [սատանան], թեկուզև շատ ջանք թափեց: Եվ ամբողջովին ամոթահար լինելով՝ [իր] գլխին վայ կարդաց, այլև մատնվեց հուսահատության նոր տանջանքնե-

տոս որ յայտնապէս եւ համարձակ հանելով այսօր զաշակերտսն ի լեառն Ձիթենեաց, օրհնեաց եւ յուսադրեաց, եւ առաջին նոցա մեծաւ հանդիսիւ եւ ձայնիւ փողոյ համբարձաւ յերկինս եւ նստաւ ընդ աջմէ Հօր, ըստ այնմ համբարձաւ Աստուած օրհնութեամբ, եւ Տէր մեր ձայնիւ փողոյ:

Քանզի տեսանէր իսկ զբազմութիւնս հրեշտակաց որք ահիւ մեծաւ սպասաւորէին համբարձման նորա. ոմանք յառաջ փութացեալք իբր կարապետ եւ պատրաստիչք տեղւոյ, եւ խուճապէին միմեանս եւ ստիպէին ի սպաս, ըստ այնմ թէ համբարձէք իշխանք զդրունս ձեր, եւ այլք զահի հարեալք ի հանդէսն հարցանէին սարսելով ո՞վ է սա թագաւոր փառաց: Եւ այլք պատասխանէին, սա ինքն է թագաւոր փառաց, եւ այլք զայլ ինչ հարցանէին, եւ այլք յերկիր իջեալ զաշակերտսն մխիթարէին եւ իրազգածս առնէին: Արդ՝ գալիլեացիք, զի՞ կայք հայեցեալք այս Յիսուս, որ վերացաւն ի ձէնջ: Նոյնպէս եւ տեսանէր զհոգիսն որք ի դժոխոց ելեալք ընդ Քրիստոսի յերկինս ելանէին ըստ աւազակին: Նոյնպէս եւ աշակերտսն տեսանէր որք յառաջն տրտում եւ ի տան արգելեալք, այսօր ուրախութեամբ օրհնէին զԱստուած ըստ այնմ, թե եւ նոցա երկրպագեալ դարձան յԵրուսաղէմ ուրախութեամբ մեծաւ: Վասն որոյ խպառ յուսահատեալ գլխակոր եղեւ: Ի յընկալնուլն իսրայէլացւոց զտապանակն ի բանակս իւրեանց. Ասէ գիրն թէ՝ յորժամ լուան այլազգիքն զձայն աղաղակին եւ ուրախութեան, հառաչեցին ասելով. վա՛յ մեզ Աստուած նոցա եկն ի բանակս նոցա, ոչ էր եղեալ այսպիսի ուրախութիւն յերեկն եւ յեռանդն ի բանակն նոցա: Այսպէս եւ ի համբառնալն Քրիստոսի յերկինս ի բանակս հրեշտակաց մեծաւ ուրախութեամբ եւ ձայնիւ փողոյ ըստ Դաւթի. ի տեսանելն եւ ի լսելն սատանայի եւ իւրայնոցն, ասացին վա՛յ մեզ, զի յերեկն եւ յեռանդն, այսինքն ի յայլ գործսն Քրիստոսի ոչ եղեւ այսպիսի ուրախութիւն Քրիստոսի եւ իւրայնոցն որպէս եղեւ այսօր ի յընկալնուլն զՏէրն իւրեանց: Քանզի որպէս ասացաք, Համբարձումն Քրիստոսի պսակ եւ լրումն եղեւ ամենայն տնօրինական գործոցն նորին ըստ երգոյն, թէ՝ օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քո, Տէր: Զի ամենայն տնօրէնութիւնքն Քրիստոսի զորս կատարէր յերկրի, էին որպէս աշխատիլ սերմանելն եւ այլն: Իսկ համբարձումն եղեւ ի լրումն, եւ ուրախութեամբ ի յընշտեմարանս ածել, կամ թէ այլք գործք տնօրէնութեանն Քրիստոսի էին որպէս մարտ եւ մրցումն ի պատերազմի ընդ դէմ թշնամւոյն սատանայի, յոր եւ Պողոս պարծիւր ասելով. զբարւոք պատերազմն պատերազմեցայ, եւ մեզ հրաւիրէ ի յայն ասելով. հայեցարուք ի զօրագլուխն Քրիստոս Յիսուս: Իսկ համբարձումն որպէս զյաղթութիւն եւ մեծաւ փառօք ի թագաւորական պալատն դառնալ, որպէս Եսայեաւ պարծի ինքն թէ՝ կոխեցի զնոսա սրտմտութեամբ, եւ

րի: Քանի որ ինքն իսկ կուրացած աչքերով տեսնում էր Քրիստոսին, որ այսօր իր աշակերտներին հայտնապես և համարձակ բարձրացրեց Ձիթենյաց լեռը, օրհնեց և հուսադրեց նրանց. և նրանց առջև մեծ հանդիսավորությամբ ու փողերի ձայնով համբարձվեց երկինք և նստեց Հոր աջ կողմում: Ըստ Դավթի՝ «Աստված բարձրացավ օրհնությամբ և շեփորի ձայնով» (Սաղմ. ԽԶ. 6):

Քանզի տեսնում էր հրեշտակների բազմությունը, որ մեծ երկյուղով սպասավորում էր Նրա համբարձումը. ոմանք առջևից էին ընթանում՝ իբրև առաջնորդ և տեղ հարդարող: Սաստում էին միմյանց և հարկադրում սպասավորել. ըստ այնմ, թե՝ «Վե՛ր քաշեցեք, իշխանները, դռները» (Սաղմ. ԻԳ. 7, 9): Ուրիշները, այդ տեսարանից ահաբեկված, դողահար հարցնում էին. «Ո՞վ է այս փառքի արքան» (Սաղմ. ԺԳ. 8, 10): Իսկ մյուսները պատասխանում էին. «Նա ինքն է փառքի արքան» (Սաղմ. ԺԳ. 10): Եվ ուրիշներն այլ բան էին հարցնում: Մյուսները, երկիր իջնելով, մխիթարում էին աշակերտներին և հանգամանքներին տեղեկացնում: «Ո՛վ գալիլիացիներ, ինչո՞ւ կանգնած նայում եք երկնքին. այս Հիսուս, որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսաք նրա երկինք գնալը» (Գործք Ա. 11): Նույնպես և տեսնում էր հոգիները, որոնք, դուրս գալով դժոխքից, Քրիստոսի հետ երկինք էին ելնում ավազակի հետ: Նույնպես և աշակերտներին էր տեսնում, որոնք մինչ այդ տրտմած էին և տանը փակված, իսկ այսօր ուրախությամբ օրհնաբանում էին Աստծուն, ըստ այնմ, թե՝ «Նրանք երկրպագեցին Հիսուսին և մեծ ուրախությամբ վերադարձան Երուսաղեմ» (Ղուկ. ԻԴ. 52): Որի համար ամբողջովին հուսահատվելով՝ [սատանան] գլխահակ եղավ՝ իսրայելացիների՝ տապանակն իրենց բանակն առնելու ժամանակ: Սուրբ Գիրքն ասում է, թե երբ այլազգիները լսեցին աղաղակի և ուրախության ձայնը, հառաչեցին՝ ասելով. «Վա՜յ մեզ, որովհետև նրանց Աստված եկավ իրենց բանակը. նման ուրախություն նրանց բանակում չէր եղել ոչ երեկ, ոչ էլ մյուս օրը»: Այսպես և Քրիստոսի՝ երկինք համբառնալու ժամանակ հրեշտակների բանակում մեծ ցնծությամբ, փողերի ձայնով, ըստ Դավթի, սատանային և յուրայիններին տեսնելու և լսելու ժամանակ ասացին. «Վա՜յ մեզ, որովհետև երեկ և մյուս օրը, այսինքն՝ Քրիստոսի այլ գործերում նման ուրախություն չեղավ Նրան և յուրայիններին, ինչպես եղավ այսօր՝ իրենց Տիրոջն ընդունելիս»: Քանզի, ինչպես ասացինք, Քրիստոսի համբարձումը Նրա տնօրինյալ բոլոր գործերի պսակն ու լրումը եղավ: Ըստ երգի, թե՝ «Տարվա պսակը պիտի օրհնվի քո քաղցրությամբ» (Սաղմ. ԿԴ. 12): Քանզի Քրիստոսի բոլոր տնօրինությունները, որոնք կատարվում էին երկրի վրա, նման էին աշխատելուն, սերմանելուն և այլն: Իսկ համբարձումը նման եղավ հունձքին և ուրախությամբ շտեմարանը լցնելուն: Կամ՝ Քրիստոսի տնօրինության մյուս գործերը նման էին կռվի և թշնամի սատանայի դեմ պատերազմում մրցելուն, որի մասին Պողոսը պարծանքով ասում է. «Պատերազմեցի բարի պատերազմը» (Բ. Տիմ. Դ. 7): Եվ մեզ հրավիրում է դեպի Նա՝ ասելով. «Նայեցե՛ք զորագլուխ Հիսուսին»: Իսկ համբարձումը [եղավ] հաղթությամբ և մեծ փառքով թագավորական պալատ վերադառնալու նման: Ինչպես որ Եսային ինքն է վստահա-

իջուցի յերկիր, եւ զամենայն հանդերձս իմ թաթաւեցի, միայն փրկեցի զգերիսն, որոց ոչ գոյր օգնական, եւ ոչ ոք էր ընդ իս: Իսկ մեծ ուրախութիւն էր Քրիստոսի, որ հզօր զօրութեամբ ինքնին եւ միայն յաղթելով զթշնամին, զկորուսեալն գտեալ եւ զհոգիսն որ էին գերիք աւար առեալ մեծաւ ուրախութեամբ առ Հայրն գնայր: Պարծիւր Յակոբ ի դառնալն ի հայրենին ասելով. ցուպ ի ձեռին միայն անցի ընդ այս Յորդանան, ահա բ [= երկու] բանակօք դառնամ. նա զերախտաւորս ցուցանէր զինքն Լաբանու ասելով. քունն հատեալ էր յաչաց իմոց ի գիշերին, ի ցրտոյ եւ ի ցորեկի այրէի արեւու եւ այլն: Իսկ Քրիստոս որ ի կերպարանս Աստուծոյ էր ըստ Պողոսի, զանձն ունայնացայց, այսինքն խոնարհեցայց, զկերպարանս ծառայի առեալ մերկ եւ աղքատակերպ եմուտ յաշխարհս. միայն զխաչն ի ձեռին, զի ի ծննդենէն մինչեւ ի մահն, ի հալածանս, ի նախատինս եւ ի չարչարանս կեայր. զգիշերն աղօթիւք անցուցանէր եւ ի ցորեկին ի վարդապետութիւնս եւ ի պարծանս:

Ահա այժմ այսօր բ [= երկու] բանակօք, այսինքն հոգովք եւ հրեշտակօք դառնայ ի հայրենին. զիա՞րդ ոչ պարծի եւ ուրախանայ: Եւ սա կարէ մեզ ապերախտիցս ասել, թէ՝ հատեալ էր քունն յաչաց իմոց եւ այլն. զի խաչիւ եւ չարչարանօք եմուտ աշխարհս եւ ահա բ [= երկու] բանակօք դառնայ առ Հայր: Այսպէս եւ մեծ ուրախութիւն էր հօրն, որ զորդին իւր մեռեալ եւ վերստին կենդանացեալ տեսանէր: Ըստ այնմ թէ այս որդիս իմ մեռեալ էր եւ եկաց: Որքան ուրախութիւն եղեւ Յակոբայ որ զՅոսէփ վերստին տեսանէր կենդանի, եւ այնպէս ընդգրկան հանդիսիւ, որ զհայրն եւ զեղբարսն ի սովուն ազատէր: Բայց Յակոբ միայն կորոյս զՅոսէփ եւ միւս անգամն եգիտ, այլ ոչ եւս տեսանէր զթշուառութիւնն, թէ որպէս արկին զնա ի գուբն (բանտ) եւ որպէս վաճառեցին, եւ որպէս զրպարտեցաւ ի կնոջէ բանտապետին, եւ որպէս մնաց ի բանտին խղճութեամբ եւ այլն: Իսկ Հայրն երկնաւոր ի յառաքելն զՈրդին իւր միածին յաշխարհս գիտէր որ ի մահ առաքէր, տեսանէր զնեղութիւնսն զոր կրէր միածին Որդին իւր յուրբաթու գիշերին, տեսանէր եւ զվաճառիչն [= երեսուն] արծաթի, ի սիրելի աշակերտէն, տեսանէր զչարչարանսն զորս կրէր ի տան քահանայապետին եւ Պիղատոսի. տեսանէր եւ զմերկ բեւեռիլն ի խաչին եւ լսէր զձայնն որ գոչէր՝ Հայր, եթէ հնար է անցո յինէն, ընդէր թողեր զիս եւ ծարաւիլն եւ զայլսն: Եւ թէ յետ այսքան չարչարանաց եւ մահուան իսկ վերստին ընկալնոյր զնա կենդանի մեծաւ փառօք եւ թագաւորական իշխանութեամբ. ըստ Եսայեայ՝ գեղեցիկ պատմուճանաւ եւ բուռն զօրութեամբ: Այլեւ ոչ միայն պատրաստեալ էր զհացն մարմնաւոր ըստ Յովսէփայ, այլեւ տուեալ իսկ ըստ մարմնոյ հօրն Ադամայ, եւ նորայնոցն զհացն կենդանարար, զոր ճա-

նում, թե՝ «...բարկությամբ ճմլեցի նրանց և գետնին հավասարեցրի ու իմ բոլոր զգեստներն արյունաթաթախ արի (Ես. ԿԳ. 3). միայն գերիներին ազատեցի, որոնք ոչ մի օգնական չունեին. և ինձ հետ ոչ ոք չկար»: Ուստի մեծ ուրախություն էր Քրիստոսին, որ հուժկու զորությամբ միայն ինքը հաղթելով թշնամուն, գտնելով կորուսյալը, նաև հոգիներին, որոնք գերի էին, ավար առած՝ մեծ ուրախությամբ գնում էր Հոր մոտ: Վստահանում էր Հակոբը ծննդավայր վերադառնալիս՝ ասելով. «Ցուպը ձեռքիս անցա Հորդանանի այս կողմը, իսկ հիմա բաժանվել եմ երկու մասի» (Ծննդ. ԼԲ. 10): Նա իրեն երախտավոր էր ցույց տալիս Լաբանին՝ ասելով. «Քունը փախել է աչքերիցս: Ցերեկը տանջվում էի շոգից, իսկ գիշերը՝ ցրտից» (Ծննդ. ԼԱ. 40): Իսկ Քրիստոս, որ, ըստ Պողոսի, Հայր Աստծո պատկերն էր՝ «Իր անձը ունայնացրեց» (Փիլիպ. Բ. 7), այսինքն՝ «խոնարհեցրեց ինքն իրեն՝ ծառայի կերպարանք առնելով, մերկ և աղքատ կերպարանքով» (հմմտ. Փիլիպ. Բ. 7) մտավ այս աշխարհ՝ ձեռքին միայն խաչ, որովհետև ծնունդից մինչև մահ հալածանքի, նախատինքի և չարչարանքի մեջ էր. գիշերներն աղոթքով էր անցկացնում, ցերեկները՝ վարդապետության և հալածանքների մեջ:

Ահա այժմ երկու բանակով, այսինքն՝ հոգիների ու հրեշտակների հետ վերադառնում է Հոր մոտ. ինչո՞ւ չցնծա և չուրախանա: Եվ սա մեզ՝ ապերախտներիս [համար] կարելի է ասել, թե՝ «Քունը փախել է աչքերիցս» և այլն: Որովհետև խաչով և չարչարանքներով մուտք գործեց այս աշխարհ, իսկ այժմ երկու բանակով վերադառնում է Հոր մոտ: Այսպես և մեծ ուրախություն էր Հոր համար, որ իր մեռած որդուն կրկին կենդանացած էր տեսնում: Ըստ այնմ, թե՝ «Իմ այս որդին մեռած էր և կենդանացավ» (Ղուկ. ԺԵ. 24): Որքա՞ն ուրախ էր Հակոբը, որ Հովսեփին կրկին կենդանի էր տեսնում և թագավորական այնպիսի հանդեսով, որ հորն ու եղբայրներին ազատում էր սովից: Բայց Հակոբը մի դեպքում կորցրեց Հովսեփին, մյուս դեպքում գտավ. և արդեն չէր տեսնում թշվառությունը, թե ինչպես նրան բանտ [գուբը] գցեցին, ինչպես վաճառեցին, և ինչպես զրպարտվեց բանտապետի կնոջից, ինչպես մնաց բանտի մեջ խեղճացած և այլն: Իսկ երկնավոր Հայրն իր միածին Որդուն երկիր առաքելիս գիտեր, որ մահվան է ուղարկում, տեսնում էր [այն] չարչարանքները, որ կրում էր Իր միածին Որդին ուրբաթ գիշերը հրեաներից, տեսնում էր երեսուն արծաթով մատնվելն իր սիրելի աշակերտից, տեսնում էր այն չարչարանքները, որոնք կրում էր քահանայապետի և Պիղատոսի տանը: Տեսնում էր նաև մերկ բևեռվելը խաչի վրա և լսում էր ձայնը, որ գոչում էր՝ «Հա՛յր, եթե կարելի է, թող ինձնից հեռու անցնի» (Մատթ. ԻՋ. 39): [Ինչպես նաև]՝ «Հայր, ինչո՞ւ թողեցիր ինձ» (Ղուկ. ԺԵ. 34). նաև՝ ծարավելը և այլն: Եվ որ այս չարչարանքներից, նույնիսկ մահից հետո կրկին ընդունում էր նրան կենդանի՝ մեծ փառքով և թագավորական իշխանությամբ: Ըստ Եսայիի՝ «Գեղեցիկ պատմուճանով և հուժկու զորությամբ» (Ես. ԿԳ. 1): Այնուհետև, ըստ Հովսեփի, ոչ միայն պատրաստել էր մարմնավոր հացը, այլև, ըստ հայր Ադամի մարմնի, մինչև իսկ տվել էր նրա նմաններին կենդանարար հաց, որը ճաշակողն այլևս չի մեռնի: Եվ ազատ-

չակօղն ոչ եւս մեռանիցի, եւ ազատեալ էր Քրիստոս ի գերութենէն եւ ըստ ինքն յերկինս ածէր առ Հայր, զմիւս որդին անառակացեալ զբնութիւնս մեր, Հայրն որ ընդունի զայսպիսի որդի, որքան ուրախանայ: Վասն որոյ ասէր կերիցուք եւ ուրախ լիցուք, զի այս որդիս իմ մեռեալ էր եւ եկաց այսպէս արդեամբք: Այլեւ ուրախութիւն էր Հոգւոյն Սրբոյ, զի զլրումն խօսեցելոցն իւրոց ի յօրէնս եւ ի մարգարէսն եւ ոչ միայն այս, այլ եւ որպէս ուրախութիւն հարուստ վաճառականի, երթ եւ եկութիւն կարաւանի: Նոյնպէս եւ ուրախութիւն եղեւ Հոգւոյն Սրբոյ համբարձմամբն Քրիստոսի: Քանզի մինչեւ համբարձումն Քրիստոսի ճանապարհք երկնի եւ երկրի փակեալ էին, եւ ոչ ոք գնայր յերկինս եւ առնոյր զպարգեւս ի Հոգւոյն Սրբոյ: Իսկ այսօր Քրիստոս ի համբառնալն յերկինս եբարձ զմիջնորմն եւ զթշնամին, որ կայր հակառակ հալածեաց եւ խայտառակեաց ըստ Պօղոսի, եւ զմեծ բանակս Հոգւոյ առեալ յերկինս եմուտ ի վայելումն պարգեւաց նորա, վասն այսորիկ եւ ուրախութիւնն ոչ միայն յերկինս գնացելոյն լիացոյց, եւ այլեւ փութացեալ յերկիր էջ եւ զառաքեալսն եւ զաշխարհս լիացոյց: Այս է ասելն թէ չեւ էր Հոգի, այսինքն պարգեւք Հոգւոյն: Քանզի Յիսուս չեւ էր փառաւորեալ, այսինքն չեւ էր յարուցեալ եւ համբարձեալ յերկինս, որ զճանապարհս յերկնից բանայցէր եւ Հոգին Սուրբ զպարգեւս իւր բաշխիցէր աշխարհի: Վասն այսորիկ եւ մեծ ուրախութիւն Հոգւոյն Սրբոյ է: Ուրախութիւն մեծ էր այսօր եւ հրեշտակաց. զի Տէրն իւրեանց յաղթող եւ գեղեցիկ պատմուճանաւ տեսանէին եւ նորին մարդեղութեան խորհրդոյն իրազեկ լինէին, որում զանկային, որպէս յայտ է ի հարցումն նոցա մեծաւ խուզմամբ եւ զպակաս տեղիս անկելոցն յինքեանց լնանեցեալ տեսանէին, եւ զպահպանութիւն եւ զսպասաւորութիւն իւրեանց արդիւնաւորս տեսանէին. վասն որոյ եւ ստէպ ստէպ յերկիր իջեալք երեւէին եւ խօսէին ընդ առաքելոյն եւ ընդ այլոցն, որպէս յայտ է ի գործս առաքելոցն: Եւ օժանդակ լինէին գործոց եւ քարոզութեանց նոցին: Ուրախութիւն էր եւ առաքելոցն, զի տրտմութիւն նոցա փարատէր, զտարակուսանս նոցա լուծանէր եւ զճանապարհս երկնից ցուցանէր ասելով՝ երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի. եւ թէ ուր ես իցեմ, եւ դուք ընդ իս իցէք եւ զճանապարհն գիտիցէք. եւ ոչ միայն նոցա, այլ եւ վասն ամենայն հաւատացելոց ասէր՝ եթէ ոք զիս պաշտեսցէ զկնի իմ եկեսցէ, զի ուր ես եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի, այլ եւ խոստանայր նոցա զՀոգին Սուրբ ասելով՝ թէ երթայց եւ զմխիթարիչն առաքեցից առ ձեզ՝ որ ընդ ձեզ բնակեսցի եւ ընդ ձեզ եղիցի յաւիտեան:

Եւ վերջապէս ասացաք յանցեալումն թէ որովհետեւ հանդերձեալ էր գնալ զերկինս, ասէր՝ ես եմ դուռն, ընդ իս եթէ ոք մտցէ եւ ելցէ, կեցցէ:

վել էր Քրիստոս գերությունից ու Իր հետ երկինք՝ Հոր մոտ էր տանում մյուս անառակ որդուն՝ մեր բնությունը: Հայրը, որ ընդունում է այսպիսի որդուն, որքան պիտի ուրախանա: Որի համար ասում էր. «Ուտենք և ուրախ լինենք: Որովհետև իմ այս որդին մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց» (Ղուկ. ԺԵ. 23-24): Այնուհետև ուրախություն էր Սուրբ Հոգու համար, որովհետև տեսնում էր իր խոսքի լրումը օրենքի և մարգարեների մեջ: Եվ ոչ միայն սա, այլ նաև ինչպես որ հարուստ վաճառականի համար է ուրախություն քարավանի երթևեկությունը, այնպես և Սուրբ Հոգու համար ուրախություն եղավ Քրիստոսի համբարձումը: Քանի որ մինչև Քրիստոսի համբարձումը երկնքի և երկրի ճանապարհները փակված էին, և ոչ ոք չէր գնում երկինք և Սուրբ Հոգու պարգևներին արժանանում: Իսկ այսօր Քրիստոս երկինք համբառնալիս «քանդեց միջնորմը» (Եփ. Բ. 14), և Պողոսի խոսքի համաձայն՝ թշնամուն, որ կար հակառակ, հալածեց և խայտառակ արեց, և Հոգու մեծ մասն առած՝ երկինք բարձրացավ, վայելելու նրա պարգևները: Ուստի և այս ուրախությունը ոչ միայն երկինք գնացածներին [լիացրեց], այլև շտապելով՝ իջավ երկիր և առաքյալներին ու աշխարհին լիացրեց: Սա է [նշանակում] այն, որ ասում է, թե դեռ չկար Հոգի, այսինքն՝ Հոգու պարգևները: Քանզի Հիսուս դեռ չէր փառավորվել, այսինքն՝ դեռ հարություն չէր առել և չէր համբարձվել երկինք, որ բացեր երկնքի ճանապարհները, և Սուրբ Հոգին իր պարգևները բաշխեր աշխարհին: Սրա համար էլ մեծ ուրախություն է Սուրբ Հոգու համար: Այդ օրը մեծ ուրախություն էր նաև հրեշտակների համար, որովհետև իրենց Տիրոջը հաղթող և գեղեցիկ զարդարված էին տեսնում: Եվ տեղյակ էին լինում նրա մարդեղության խորհրդին, որը և ցանկանում էին, ինչպես երևում է նրանց հարցման մեջ՝ մեծ որոնումով: Եվ իրենցից ընկածների պակաս տեղերն էին տեսնում լցված: Եվ տեսնում էին իրենց պահպանումն ու սպասավորումն արդյունավորված: Որի համար և ստեպ-ստեպ երկիր իջածներն էին երևում և խոսում էին առաքյալների և մյոսների հետ, ինչպես հայտնի է Գործք առաքելոցից: Եվ օգնական էին լինում նրանց գործերին ու քարոզներին: Ուրախություն էր և առաքյալների համար, քանզի փարատում էր նրանց տրտմությունը, ցրում էր նրանց տարակուսանքը, ցույց էր տալիս երկնքի ճանապարհները՝ ասելով. «Գնում եմ և ձեզ համար էլ տեղ եմ պատրաստելու» (Հովհ. ԺԴ. 2), ինչպես և՝ «Ուր ես լինեմ, դուք ևս ինձ հետ եք լինելու. և ճանապարհն եք իմանալու» (Հովհ. ԺԴ. 3-4): Եվ ոչ միայն նրանց, այլ նաև բոլոր հավատացյալների համար էր ասում. «Եթե մեկն ինձ ծառայի, իմ հետևից կգա», որովհետև «ուր ես եմ, այնտեղ կլինի և իմ ծառան» (Հովհ. ԺԲ. 26): Այլև նրանց խոստանում էր Սուրբ Հոգին՝ ասելով. «Պիտի գնամ և մխիթարիչ պիտի ուղարկեմ ձեզ մոտ, որպեսզի հավիտյան ձեզ հետ բնակվի և ձեզ հետ լինի» (հմմտ. Հովհ. ԺԴ. 16, ԺԶ. 7):

Եվ վերջապես, [ինչպես] վերն ասացինք, թե՝ «Պատրաստվում էր երկինք գնալու», [այժմ] ասում է. «Ես եմ դուռը. եթե մեկը իմ միջով մտնի և ելնի, կփրկվի» (Հովհ. Ժ. 9): [Ինչպես նաև]՝ «Եթե մեկն ինձ ծառայի, իմ հետևից կգա» (Հովհ. ԺԲ. 26): Ուստի ով կամենում է երկնքում Քրիստոսի հետ հանգիստ առ-

Եթէ ոք զիս պաշտեսցէ, զկնի իմ եկեսցէ: Ուրեմն՝ որ կամի ընդ Քրիստոս հանգչիլ յերկինս, մտցէ ընդ այս դրամբն եւ ընդ այն ճանապարհ, զի կարիցէ ընդ նմա հանգչիլ: Նայեաց ի դուռն եւ ի ճանապարհն, եւ հետեւեաց նմա ի մուտն յերկինս: Ի կոյսն կուսութեան ուսուցանէ, ի մսուրն զաղքատութիւն, ի յաշխարհս զգործս բարիս եւ խոնարհութիւն, ի խաչն զհամբերութիւն զանոխակալութիւն եւ զներումն յանցանաց, ի գերեզման եւ ի դժոխս, զգութ եւ զայցելութիւն անկելոց եւ անօգնականաց: Եւ ապա անդի յերկինս զհանգչիլ եւ փառաւորիլ, վերջապէս եւ թէ դու եւս ընդ այս դրունս, եւ ընդ այս ճանապարհս մտեր յաշխարհս եւ ելեր, ապա հանգչիս: Եւ թէ ոչ ընդ յայլ հետս գնացեր, մոլորիս եւ վայ կարդաս անձինդ ըստ նոցա որք յուսահատեալք ասէին՝ անօրէնութեան շաւղոք շրջեցաք եւ գնացաք ընդ անկոխ անապատն: Որպէս ինքն յանդիմանելն յաշակերտսն, ասէր ոչ զնոյն պարտէր չարչարիլ Քրիստոսի, եւ ապա մտանել ի փառս իւր: Նաեւ ըստ Պողոսի թէ հնազանդ լեալ մահու չափ եւ մահու խաչի վասն որոյ եւ Աստուած զնա երկարացոյց: Նախ աշխատիլ եւ ապա հանգչիլ որպէս ամենայն օրէնք պահանջէ: Վասն այսորիկ եւ Պետրոս յորդորէ քանզի ի զոք իսկ կոչեցայք զի զհետ երթայցէք զհետոց նորա: Զի ընտանի թռչունն ոչ կարէ բարձրանալ, զի միսն շատ է, եւ թեւն անզօր: Նոյնպէս եւ հեշտասէրն ոչ կարէ յերկինս ելանել, զի ծանր է: Լուր Դաւիթի որ զարմանալով հարցանէ թէ՝ ով ելցէ ընդ Քրիստոսի ի լեառն, եւ կամ ով կացցէ ի տեղւոջ տէրութեան նորա: Պատասխանէ Հոգին Սուրբ թէ՝ որ զսուրբ ձեռօք եւ անբիծ սրտիւ, եւ այլն:

Վասն այսորիկ Պողոս եւ Դաւիթ յերկակողմն, այսինքն՝ յերկուս միտս ընդդէմ միմեանց մեկնին զնստիլն Քրիստոսի ընդ աջմէ Հօր: Զի Պողոս ասէ թէ՝ նստաւ ընդ աջմէ Հօր, զի բարեխօսեսցէ վասն մեր, եւ յիրաւի է, վասն զկնի իւր գնացելոյն բարեխօսէ առ Հայր: Իսկ Դաւիթ ասէ, նստաւ ընդ աջմէ Հօր, զի դիցէ զթշնամիսն իւր՝ ի ներքոյ ոտից իւրոց, եւ այս յիրաւի է, զի որք անարգելով զբան նորա ոչ գնացին ընդ ճանապարհն նորա, իբր թէ՝ թշնամի եղեն նմա, որոց վասն զուր եւ ընդ վայր հեղաւ արիւն նորա. զորոց լալով ասէ Պողոս զթշնամեաց խաչին Քրիստոսի, որոց կատարածն կորուսցէ: Այսպիսեացն իբրեւ ոսոխ եւ գանկատաւոր է Քրիստոս առ Հայր: Ուրեմն եթէ կամիք ընդ Քրիստոսի յերկինս բազմիլ, մտցուք ընդ դուռն նորա եւ զկնի նորա գնասցուք, եւ ընդ Յակոբայ նախքան զմեզ, զընծայս զանազանս առաքեսցուք առ եղբայրն մեր Քրիստոս, զի քաղցրացուսցուք զսիրտ նորա. եւ այլն:

նել, այն դռնով և այն ճանապարհով պետք է մտնի, որպեսզի կարողանա Նրա հետ հանգչել: Նայի՛ր դռանը և ճանապարհին և հետևի՛ր Նրան: Աշխարհ մտնելիս կույսի մեջ կուսություն էր ուսուցանում, մսուր [մտնելիս]՝ աղքատասիրություն, աշխարհ [գալիս]՝ բարի գործեր և խոնարհություն: Խաչվելիս՝ անոխակալ համբերություն և հանցանքների ներում: Գերեզման և դժոխք [մտնելիս]՝ զուրթ և այցելություն հիվանդներին ու անօգնականներին: Եվ ապա այնտեղից երկինք [ելնելիս]՝ հանգչելը և փառավորվելը: Եվ եթե դու ևս այդ դռների միջով և այն ճանապարհով մտնեիր աշխարհ և ելնեիր, ապա պիտի [երկնքում] հանգչեիր: Իսկ եթե ոչ, այլ հետքով պիտի գնացած լինես, պիտի մոլորվես և վայ պիտի տաս քո անձին, նրանց նման, որ հուսահատ ասում էին՝ «...անօրենության շավղով ընթացանք և անկոխ ճանապարհով գնացինք»: Ինչպես որ ինքն էր աշակերտներին հաղիմանելիս ուսուցանում. պետք չէր, որ Քրիստոս նույն [չարչարանքով] չարչարվեր և ապա մտներ իր փառքի մեջ: Այլև նախ աշխատել և հետո հանգստանալ, ինչպես որ ամեն մի օրենք է պահանջում: Սրա համար և Պետրոսը հորդորում է. «Որովհետև այդ բանի համար իսկ կոչվեցիք, որ իր հետքերով գնանք» (հմմտ. Ա. Պետր. Բ. 21): Որովհետև ընտանի թռչունը չի կարող թռչել, քանի որ մարմինը պարարտ է, իսկ թևը՝ անզոր: Նույն կերպ և հեշտասերը չի կարող երկինք գնալ, քանի որ ծանր է: Լսի՛ր Դավթին, որ զարմանքով հարցնում է, թե՝ «Ո՞վ կբարձրանա Քրիստոսի հետ Տիրոջ լեռը, կամ ո՞վ կկանգնի նրա սրբավայրում» (Սաղմ. ԻԳ. 3): Պատասխանում է Սուրբ Հոգին, թե՝ «Նա, ով մաքուր ձեռքեր և անբիծ սիրտ ունի» (Սաղմ. ԻԳ. 4):

Սրա համար Պողոսը և Դավիթը երկու կողմով, այսինքն՝ երկու մտքով, միմյանց հակառակ են մեկնաբանում Քրիստոսի՝ Հոր աջ կողմում նստելը: Որովհետև Պողոսն ասում է, թե՝ «Նստեց Հոր աջ կողմում, որպեսզի բարեխոսի մեզ համար», և իրավացի է, որովհետև իրենից հետո գնացողների համար բարեխոսում է Հոր առաջ: Իսկ Դավիթն ասում է. «Նստեց Հոր աջ կողմում, որպեսզի իր թշնամիներին դնի իր ոտքերի տակ»: Սա ևս իրավացի է, որովհետև ովքեր, անարգելով Նրա խոսքերը, չգնացին Նրա ճանապարհով, իբրև թե թշնամի եղան Նրան, [և] որոնց համար իզուր և անտեղի հեղվեց Նրա արյունը: Որոնց մասին Պողոսը արտասվելով ասում է՝ [թե այն] թշնամիները խաչեցին Քրիստոսին, որոնց գործերն էր կորստյան մատնում: Այնպիսիներին Քրիստոս թշնամի է, և գանգատավոր՝ Հոր առաջ: Ուրեմն, եթե կամենում ենք Քրիստոսի հետ երկնքում բազմել, մտնենք Նրա դռնից ներս և գնանք Նրա հետևից: Եվ ըստ Հակոբի՝ «Նախքան [մեր գնալը] զանազան ընծաներ առաքենք մեր եղբայր Քրիստոսին, որպեսզի քաղցրացնենք Նրա սիրտը»:

Թարգմանությունը՝
ՎԱՉԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

Թարգմանության մեջ ավելացված են սուրբգրային տեղիները, կետադրությունը՝ արդի, հատուկ անունները՝ գլխատառ: